ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ 2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտի ուսումնասիրության և սույն թվականի հունիսի 10-ին ՀՀ ոստիկանությունում տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում ներկայացնում ենք Ոստիկանության՝ 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) վերաբերյալ հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

1. Ոստիկանության կողմից չի ներկայացվել Ոստիկանության մեկ միասնական հայտ, ինչը չի համապատասխանում Մեթոդական ցուցումների[1] պահանջներին:

   Օրինակ 1. Հայտերում բացակայում է տեքստային՝ նկարագրողական հատվածը՝ «Զարգացման միտումները նախորդ միջնաժամկետ հատվածում», «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» և «ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային գերակայությունները» բաժինները:

   Օրինակ 2. Ոստիկանության Հայտերում բյուջետային և արտաբյուջետային ծրագրերը ներկայացված են առանձին ծրագրերի տեսքով:

   Օրինակ 3. Ոստիկանության ներկայացրած Հայտերի Հավելված N 3-ի ՄԱՍ 1-ում Ոստիկանության ռազմավարական նպատակները, ըստ էության, շարադրված են **«Ոստիկանության ոլորտում զարգացման հիմնական գերակայությունները»** բաժնում, (որում ներառված են նաև 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված Կառավարության ծրագրի որոշ դրույթներ), մինչդեռ այդ գերակայությունները հենց հանդիսանում են ՄԺԾԾ ժամանակահատվածում Ոստիկանության ռազմավարական հիմնական նպատակները:

   Օրինակ 4. Հայտերի Հավելված N 3-ի ՄԱՍ 1-ում ներկայացվել է Ոստիկանության կառուցվածքային փոփոխությունների հիմնական ուղղությունները, սակայն չեն ներկայացվել կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները:

   <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1:</u> Անհրաժեշտ է ներկայացնել մեկ միասնական հայտ, որում պետք է ներառել Ոստիկանության կողմից իրականացվող բոլոր ծրագրերի/միջոցառումների վերաբերյալ Մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխանող տեղեկատվություն:

   <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.2:</u> Ոստիկանության ռազմավարական նպատակները սահմանել հստակ և կապել ՀՀ կառավարության ծրագրի «2.2. ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» բաժնում ներառված Կառավարության գործունեության հիմնական ուղենիշների հետ, այլ ոչ թե որպես ռազմավարական նպատակ կամ թիրախ նշել Ոստիկանության հիմնական լիազորությունները կամ ամենօրյա գործունեության նպատակները:

---

[1] ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներ (այսուհետ՝ Մեթոդական ցուցումներ)

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կառավարության 2019թ. մայիսի 16-ի N 650-Լ որոշման N 1 հավելվածով հաստատվել է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը, ըստ որի՝ Ոստիկանությունը, սահմանված ժամանակահատվածում որոշակի միջոցառումներ պետք է իրականացնի:

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.3:</u> Ոստիկանության ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել նաև ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ և հաշվի առնել, որ այդ հավելվածով հաստատված **«Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի» Մաս 3-ով Ոստիկանությունը որոշակի միջոցառումներ է իրականացնելու:**

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.4:</u> Անհրաժեշտ է համառոտ նշել Ոստիկանության կողմից բյուջետային ծրագրերի շրջանակներում իրականացվող այն հիմնական միջոցառումները, որոնք ուղղված են գերակա վերջնական արդյուքների ապահովմանը:

Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

2. Ոստիկանության Հայտերի ներկայացված ռազմավարական հիմնական նպատակների և թիրախների ու բյուջետային ծրագրերի/միջոցառումների ակնկալվող արդյունքերի և ցուցանիշների միջև առկա են հակասություններ:

Օրինակ 1. Հայտերի Հավելված N 3-ի ՄԱՍ 1-ում Ոստիկանության ռազմավարական նպատակները, ըստ էության, շարադրվել են «Ոստիկանության ոլորտում զարգացման հիմնական գերակայությունները» բաժնում, սակայն պարզ չէ, թե Հավելված 3-ի Մաս 3-ում ներառված բյուջետային ծրագրերի համար սահմանված վերջնական արդյունքային ցուցանիշները արդյոք ճիշտ են ընտրված և հանգեցնելու են ռազմավարական թիրախներին և սահմանված արդյունքային ցուցանիշներին՝ հաշվի առնելով, որ անգամ էական տարբերություններ կան Հավելված N 3-ի ՄԱՍ 2-ում ծրագրերի/միջոցառումների նպատակների և վերջնական արդյունքների նկարագրությունների ու Հավելված N 3-ի ՄԱՍ 3-ում նույն ծրագրերի համար ընտրված վերջնական արդյունքների (չափորոշիչների և թիրախների) միջև:

Օրինակ 2. Հավելված 3-ի Մաս 3-ում ծրագրերի վերջնական արդյունքների համար ելակետային ժամկետները նշված չեն:

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1:</u> Վերոգրյալի հիման վրա Հայտերում Ոստիկանության ռազմավարական նպատակների և թիրախների հստակեցումից հետո անհրաժեշտություն է առաջանալու բյուջետային ծրագրերով այնպիսի վերջնական արդյունքներ (չափորոշիչների և թիրախների) սահմանել, որոնք պետք է երաշխավորեն ՄԺԾԾ ժամանակահատվածում Ոստիկանության ռազմավարական նպատակներից և թիրախներից յուրաքանչյուրի իրագործումը: